

25.779

9W

ԱՅԻ ԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


7

Լ. Ի ՑՈԶԵ ԹՈՎԿԻ Զ

ԳԵՂ ԿԱՆԳՆԻ

ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ

(ՊՈՊՔԵՐԸ.ՑԻԱՆ Գ.ՑՈՒՊ.ՌՈՒՄ)



ԱԽՀԱ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՎԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1925

09 04 2010

334
Դ-50

Լ. ԽԵՂԱՔԻՆՎՈՐ

Л. ИОЗЕФОВИЧ
ОДИН В ПОЛЕ НЕ ВОИН
(Копперация в деревне)

на армянском языке.



Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва, Никольская, 10.

ԳԵՂ ԿԱՆԳՆԻ
≡≡≡ ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ

(ԿՈՂՄԵՐՈՅԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ)



Ս. Խ. Զ. Ա. ԺՈՂՈՎՐԴՈՒՆԵՐԻ ԿԵՆ. ՀՐԱՄԱԿՎՈՒՅՑՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1925

23.779

26.04.2013

Книга набрана и отпечатана в 3-й типографии Госиздата С. С. Р. Армении. Москва, Армянский пер., 2. В количестве 5000 экземпляров.
Главлит № 47001.

36 604 - 62

ԻՆՉՊԵՍ ԵՑԻՆ ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂՈՒՄ ԱՌԱՋ ՅԵՎ
ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ՀԻՄԱ.

Առաջ գյուղում այնպես չեյին ապրում, ինչպես հիմա։ Գյուղացին ամեն ինչ ինքն եր պատրաստում, նա վոչինչ չեր առնում. քաղաք չեր գնում, վորովհետև յերկաթուղիչ կար։ Բացի գըանից գյուղացին քաղաքի կարիքը այնքան ել չեր զգում։ Գյուղացու պահանջներն այն ժամանակ շատ քիչ եյին։ Գործիքներից նա միայն գութան կամ արոր եր գործածում, վոր ինքն եր շինում։ Այն ժամանակվա կյանքն ել շատ պարզ եր. գիրք, լրագիր, չիթ, ինքնայեռ չեյին գործածում։ Գյուղերում կան շատ ծերունիներ, վորոնք կարող են պատմել այն ժամանակվա կյանքի մասին։

Բայց ահա քաղաքների մեջ սկսեցին գործարաններ շինել, յերկաթուղի անցկացրին. ապրանքների գները եժանացան։ Գյուղացու համար այդ ժամանակ ավելի ձեռնուու յեր քաղաքից կտորեղեն ու վոտնաման գնել, քան թե

տանը պատրաստել։ Փոխանակ առւնը նստելու և մի զույգ չարոխի կամ տրեխի վրա մի ամբողջ որ աշխատելու, գյուղացին կարող եր ծախել իր բուրդը, բամբակը կամ կտավատը և փոխարենը պատրաստի կտավ գնել։

Գյուղացին իմացել եր, վոր յեթե խոփ գնի, հողը նրանով հերկի, լավ հունձ կտանա։ Այդ պատճառով ել գութանի փոխարեն գյուղերում սկսեցին արորներ գործածել։

Հիմա շատ գյուղերում ավելի առաջ են գընացել։ Գյուղացիները հասկացել են, վոր ավելի լավ կլինի, յեթե քիչ ցանեն, բայց հողը լավ մըշակեն. այն ել հացահատիկ և խոտ ցանեն։ Թե՛ բերքը շատ կլինի, թե՛ ոգուտը շատ կլինի, և թե տավարը կուշտ կլինի։

Հենց վոր գյուղացին սկսեց իր աշխատանքի արդյունքը վաճառել, իսկ իր պետքերի համար քաղաքի գործարանային ապրանքներ գընել, նրա չորս կողմը ու ազուամբերի պես հավաքվեցին չարչիներն ու խանութպանները։ Նրանք գյուղացուց գնում եյին և ձու, և կաթ, և հաց, և բուրդ. մի խոսքով այն ամենը, ինչ վոր գյուղացին ծախելու յեր հանում։ Յե՛րբ ուզում ես բեր, չարչին ապրանքը կառնի։ Բայց մի բան լավ պիտի գիտենաս, վոր նա քո ապրանքի գինը յերշուշեք անգամ եժան և գնահատում։ Փողի

տեղ չարչի-գուղացին գյուղացուն բաց եր թողնում ապրանք։ Ի՞նչ ես կարծում՝ ի՞նչ գնով։ Ամեն մի գյուղացի ել լավ գիտե, վոր չարչու ապրանքը միշտ ել թանկ ե յեղել քաղաքի գներից։ Զարչի-խանութպանները գյուղացու թափած քրահնքի արդյունքը իրենց գրպանն եյին գնում, իսկ գյուղացուն իրենց ճանկերի մեջ պահում։

Չնայած վոր գյուղացին տեսնում և հասկանում եր, վոր շարչին իր բուրդը խուզում ե այսպես, ինչպես վոչխարի բուրդն են խուզում, բայց ի՞նչ կարող եր անել։ Մենակ մարդը ի՞նչ կարող ե անել։ Իսկ գյուղացիների մեջ միություն յեվ կազմակերպություն չկար։ Ընդհակառակը, պատահում եր, վոր գյուղացիք իրենց ապրանքը ծախելու համար ապրանքի գները ցածրացնում եյին, և գրանով իրար վնասում։ Զարչուն ել հենց այդ եր պետք։

Բայց հետզհետե գյուղացիներից շատերը ըսկսեցին հասկանալ, վոր զորբաների և չարչի-գուղանչու համար աշխատելուն վերջ պետք ե տալ։ Նրանք յեկան այն յեզրակացության, վոր յեթե գյուղացիները ընկերություն կազմեն, միասին գնեն իրենց հարկավոր ապրանքները և միասին ծախեն, ոգուտը կմնա իրենց։ Այդ ոգուտը կարող են իրենց պետքերի վրա ծախսել։

Հիմա յերկի գյուղ չկա, վոր չգիտենա, թե
ի՞նչ բան և կոռպերատիվը: Բայց գյուղացիներից
շատերը լավ ծանոթ չեն, թե ինչ աշխատանք
են տանում կոռպերատիվը և զանազան ընկերու-
թյունները: Գյուղացիներից շատերը չգիտեն,
թե ինչ ոգուտ կարող են ստանալ, Դրանից ե,
վոր մեր կոռպերատիվները վատ են աշխատում:

Վերջին ժամանակները մեր գյուղերում կո-
ռպերատիվների և ընկերությունների թիվը քա-
նի գնում շատանում ե: Այստեղ, վորտեղ աշ-
խատանքը լավ ե զբաժ, ոգուտը իսկույն զգաց-
վում ե: Գյուղը բոլորովին նոր կերպարանք ե
ստանում:

Մենք հիմա Խորհրդային Միության մեջ ու-
նենք այնպիսի գյուղեր, վորտեղ լավ կոռպերա-
տիվներ կան: Այդ գյուղերը արտասահմանի
գյուղերից չեն տարբերվում:

Մենք այժմ ունենք գյուղատնտեսական մեծ
միություններ, վորոնք տամնյակ հազար գյու-
ղատնտեսական ընկերություններ են միացնում: Մենք ունենք կոռպերատիվ և գյուղատնտեսա-
կան բանկ: Այդ միություններն ու բանկերը
գյուղական ընկերություններին սերմ, մեքենա
և փող են բաց թողնում:

Բայց մեր Խորհրդային Հանրապետության
համար այդ քիչ ե: Մենք ամբողջ խորհրդային

իշխանության հողի վրա համարյա մի միլիո-
նի չափ գյուղեր ունենք: Այդ գյուղերի մեջ
կան այնպիսները, վորոնք մինչև հիմա յել ըն-
կերություններ ու կոռպերատիվ չունեն: Մին-
չև հիմա յել չարչիթալանչին նրանց կողուղ-
տում ե:

Այս գրքում յես ուզում եմ պատմել գյու-
ղատնտեսական զանազան ընկերությունների
մասին: Որինակի համար՝ կաթնային, մեքենագոր-
ծական, անտառային և այլ ընկերությունների
մասին: Պետք ե պատմեմ նաև, թե ի՞նչպես
պետք ե այդպիսի ընկերություններ հիմնել և
ի՞նչպես պետք ե նրանք աշխատեն, վորպեսզի վը-
նաս չանեն. Ի՞նչ միջոցներ են հարկավոր, վոր-
պեսզի նրանց աշխատանքն առաջ գնա:

Կոռպերատիվը գյուղացուն վոչ միայն ո-
գուտ ե տալիս, այլև գիտություն: Մարդուն
հարկավոր ե վոչ միայն հաց, այլև գիտություն:
Իզուր չե ասված, թե մի խելքը լավ ե, իսկ
յերկուսը՝ ավելի լավ: Իսկ յերբ գյուղացիները
հավաքվում են, ընկերություն կազմում, ի՞նչքան
մարդ են խելք խելքի տալիս և միասին աշխա-
տում: Յեթե նրանց մեջ մի կամ յերկու քիչ
հասկացող մարդ ել լինի՝ վոչինչ, դրանք ել աշ-
խատանքի մեջ կսովորեն:

Կոռպերացիան մեր անուս, դեռ խավար

գյուղացուն գիտելիքներ կտա և նըա կյանքը
ավելի կուլտուրական կղարձնի:

ԿԱԹՆԱՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ամեն մի գյուղացու ընտանիքում մի կամ
յերկու կով կա: Պատահում են գյուղական ըն-
տանիքներ, վորոնք յերկուսից ավելի կովեր ու-
նեն: Մեր գյուղերում կովին լավ չեն մտիկ
տալիս, վատ են կերակրում, այդ պատճառով
ել կովը քիչ կաթ ե տալիս: Մեր գյուղացու-
կովի կաթը տարեկան 80 փթից ավել չի լի-
նում:

Վա՞րտեղից խեղճ կովը ավելի կաթ տա:

Լավ և առատ կաթ ստանալու համար կովին
հարկավոր ե տալ մննդարար և համեղ խոտ,
լավ ուտելիք և խնամել նըան:

Ի՞նչ դրության մեջ ե գյուղացու կովը: Լավ
խոտի յերես նա համարյա չի տեսնում: Նըան
կերակրում են մեծ մասամբ հարդով: Այդ ինչ
կերակուը ե վոր: Կովը այդ տեսակ կերակր-
ուից ուժ կունենա և վոչ ել՝ կաթ: Գարնան
դեմ, յերբ կովը գոմից գուրա են հանում, նըա
վոաները հազիվ են շարժվում: Նա այնքան նի-
հար ե լինում, վոր ասես հենց հիմա վայր
կընկնի: Գարնանը կովին դաշտ են քշում: Ի՞նչ

ե ուտում այնտեղ. անպետք ու անսնունդ խո-
տեր: Բայց կան բույսերի տեսակներ, վոր
կովը չի ուտում, վորովհետև չեն մարսվում:

Ահա այդ տեսակ խոտեր ուտելով նիհար
անասունը մի կերպ մինչեւ աշուն ապրում ե:
Իհարկե, կենդանին դրանից ոգուտ չի ստանում:
Մի կերպ աղբում ե ելի: Գալիս ե աշունը,
ցանքան ու խոտը հավաքում են դաշտից: Նորից
կովի համար սկսվում ե հին որերի պատմու-
թյունը: Յեվ այդպես աարեց տարի շարունակ:

Գյուղացին կովից կաթ ե ստանում, ձիշտ ե,
քիչ ե ստանում, բայց ստանում ե: Հարկավոր
ե գյուղացուն ճանապարհ ցույց տալ, թե ի՞նչ
անի, վորպեսզի շատ կաթ ստանա և կաթից
ել՝ շատ ոգուտ:

Գյուղերում կաթի գործը կանանց վրա յե-
րնկած: Այդ—կնկա գործ ե, ասում ե տղամար-
դը և մի կողմ քաշվում: Գյուղացին կովից մի-
այն աղը ե սպասում: Յեթե գյուղացին լավ ու-
շագրություն դարձնի կովի կաթի վրա և ինքը
հսկի կովին, կտեսնի, վոր կաթի գործը նըան
այնքան ոգուտ կտա, ինչքան ցորենի ցանքը:

Տեմնենք, թե գյուղացու ստացած կաթն
ուր ե գնում: Միայն մեծ քաղաքների մոտ
ապրող գյուղացիք կարող են ամեն որ իրենց
կովերի կաթը քաղաք տանել և այնտեղ ծախել:

Այդպիսի գյուղերի թիվը շատ քիչ է: Գյուղերից շատերը գտնվում են քաղաքներից շատ հեռու: Վորպեսզի գյուղից քաղաք գնաս, հարկավոր և մի որ ճանապարհ գնալ: Այդ գյուղերի կովերի կաթը ի՞նչ են անում: Պանիր, յուղ են շինում: Պատրաստածից թողնում են իրենց տանն այնքան, ինչքան իրենց հարկավոր ե, իսկ մնացածը ծախում գլխավորապես չարչիներին: Մի դույլ կաթից $\frac{1}{2}$, մինչև $\frac{3}{4}$ ֆունտ յուղ և ստացվում: Իսկ լավ կաթնատնտեսության մի դույլ կաթից ստացվում ե ամենաքիչը մի ֆունտ հալած յուղ: Պատահում ե, վոր ավելի յեւ ստացվում:

Այդ տեսակ յուղը թանկ գնով ծախել չի կարելի, վորովհետեւ վատ և պատրաստված, մաքուր չի և շատ շուտ և փշանում:

Հապա այդպիսի անտեսություն վարող գյուղացու մոտ խոսիր կաթի գործի մասին: Ականջ չի դնի, — ի՞նչ ոգուտ կարող ե տալ կաթը, կպատասխանի գյուղացին: Վնասից ջոկ ուրիշ բան չի տալիս: Յեթե կովը աղբ տա, դա յել մի բան է:

Նույնիսկ այն տեղերում, վորաեղ կովի կաթն ու կարագը չարչի-խանութպաններին են ծախում, կովի վրա նայում են, վորպես «աղբ տվողի» վրա: Հասկանալի յեւ, վոր կաթ, պանիր ու

յուղ հավաքողը կես գնով ե գյուղացուց առնում ապրանքը: Այդ ե պատճառը, վոր կովի տված ոգուտը շատ քիչ ե, և տերը չի մտածում կաթնային տնտեսության մասին:

Բայց ամեն մի գյուղացի լավ գիտի, վոր իր պանիրն ու յուղը գնող չարչին ոգուտ ե ստանում: Ի՞նչ ե անում չարչին: Կով չի կը թում, պանիր չի շինում, խնոցի չի հարում: Առնում ե պատրաստի ապրանքը և փողը իր գրպանը դնում: Քաղաքներում կաթ, պանիր և ուղ հավաքող մարդիկ ունի, վորոնց ուղարձկում ե հավաքածը և թանկ գնով ծախում:

Իսկ խեղճ գյուղացին ինչքան ուժ ունի աշխատում ե, քրտինք թափում, տանջվում, և վոչինչ չի դուրս գալիս:

Իսկ պակասություններին վերջ չկա:

Բայց յեթե գյուղացին լավ նայի իր շուրջը և իր ընտանիքում աշխատանքի ձեվը՝ փոխի, մեծ ոգուտներ կունենա: Վերցնենք հենց կաթնային գործը:

Այդ ի՞նչ կաթի գործի մասին ե խոսքը, կասի քեզ գյուղացին: Ահա դրա մասին ենք խոսելու:

Գյուղացու կովերի կաթն առնում են կաթ հավաքողները, նրանք պահանջում են, վորպեսզի կաթի սերը գյուղացին չքաշի և իրեն ծախի:

Յեթե գյուղացին մի ուրիշին ծախեց, ել նրա կաթը հավաքողը չի առնի; Ի՞նչ անի գյուղացին, ո՞ւր տանի կաթը:

Գյուղացիները կարող են ազատվել չարչիներից միայն այն ժամանակ, յերբ կաթնային ընկերություններ հիմնեն:

Գյուղացին մենակ վոչինչ չի կարող անել, նա միայն ծոծրակը կարող ե քորել ու նայել, թե ինչպես չարչին հարստանում ե: Չարչին ել չեր կարող հարստանալ յեթե միայն մի գյուղացու հետ գործ ունենար, ինչքան շատ մուշտարի ունենա չարչին, այնքան լավ կգնան նրա գործերը: Ահա այդպես ել—կաթնային ընկերության գործը: Ինչքան շատ անդամ ունենա ընկերությունը և ինչքան շատ աշխատեն նրա անդամները, այնքան ընկերությունը կհարստանա: Յեթե ընկերությունը հարուստ ե, կնշանակե ընկերության անդամները կաթից շատ ոգուտ կտանան:

Միայն գյուղացիների կաթնային ընկերություն կազմակերպելը կարող է կաթնային տնտեսությունը լավացնել յեվ ոգուտ տալ գյուղացուն:

Կաթնային ընկերություններն իրենք են կաթը ծախում առանց չարչու կամ միջնորդի ոգնության: Ահա թե ինչու այն ոգուտար, զոր առաջ չարչու գրպանն եր գյուղացին կովեր գնել:

ցուն: Յեթե գյուղում սպառողական կոռպերատիվ կա, գյուղացիք փողի փոխարեն կարող են ապրանք վերցնել: Բանից դուրս ե գալիս, զոր գյուղացին այստեղ ել ոգուտը փոխանակ չարչուն տալու, ինքն ե ստանում կամ գյուղական կոռպերատիվին թողնում:

Հայտնի ոռւս մասնագետ-կաթնագործ Ս. Պ. Ֆրիդալինը տես ի՞նչ ե ասում: Յերբ Մոսկվայի նահանգի Վոլկոլամսկի գավառի գյուղացիները սկսեցին խոտը ցանել միացած ուժերով, նրանց խոտի համար հատկացրած հողը ավելացրին, զորպեսզի դրանով գյուղացիներին խրախուսեն: Խոտի գինը տարեց տարի պակասում եր: Լավ խոտի փութը գյուղում գարնանը 20—40 կոպեկ եր: Գյուղացիք սկսեցին խոտը Մոսկվա և նույնիսկ Լենինգրադ ուղարկել:

Յեվ ահա 1910 թվի ապրիլի 20-ին Խովան գյուղում առաջին անգամ կաթնային ընկերություն ե բացվում: Առաջին տարվա ընթացքում ընկերությունն իր անդամներից 10 հազար փրթից ավելի խոտ գնեց և ծախեց Մոսկվայում: Հենց նույն տարվա ընթացքում գյուղացիք 700 ոռւք զուտ ոգուտ ստացան:

Յերբ գյուղացիք տեսան, վոր ընկերության միջոցով կաթի գործ անելն ոգտակար ե, սկսեցին կովեր գնել: Խոտը Մոսկվա կամ Լենինգրադ

ուղարկելու փոխարեն սկսեցին իրենց կովերին
տալ:

Դժվարը առաջին քայլերն եյեն: Շատերը
չեյին հավատում, վոր կովի կաթը կարող ե ո-
գուտ տալ: Հենց վոր կաթ հավաքողները տե-
սան, վոր գյուղացիք իրենք են ընկերություն
կազմել, իրար անցան: Կաթի գինը ավելացրին,
սկսեցին համոզել գյուղացիներին, վորպեսզի
նրանք կաթն իրենց ծախեն: Հետո հավատացնում
եյին գյուղացիներին, թե կաթնային ընկերու-
թյան մեջ մտնելու կարիք չկա: Բայց,—ասում
ե Ֆրիդալինը,—գիտակից գյուղացիների շնոր-
հիվ կաթնային ընկերությունը սկսեց ավելի զար-
գանալ և ամրանալ: Գյուղացու կովերի կաթը
Մոսկվայում ծախվում եր նույն գնով, ինչ գնով
վոր ծախվում եր մեծ ագարակատերերի կովերի
կաթը:

Այդ 10—15 տարի առաջ եր: Հիմա Մոս-
կվայի նահանգում այնպիսի գյուղեր կան, վոր-
տեղ կաթի գործը դրված ե այնպես, ինչպես
արտասահմանում:

Այժմ տեսնենք, թե ինչպես ե հարկավոր
կազմակերպել կաթնային ընկերությունը:

Կաթնային ընկերություն հիմնելու համար
առաջին անգամ այնքան ել շատ մարդ հարկա-
վոր չե: Բավական ե, յեթե գյուղում գտնվի 10

— 15 գյուղացի, վորոնք լավ հասկացած լինեն
կաթնային ընկերության ոգտակարությունը և
ընդհանուր գործի համար աշխատել ցանկանան:
Գործի սկզբում դա բավական ե:

Մարդկանց այդ փոքրիկ խմբակը առաջին
հերթին պիտի գրքեր կարդա կամ գյուղացիների
հետ զրուցներ ունենա, թե ի՞նչպես անեն, վոր-
պեսզի կաթի գործը լավ հիմքերի վրա գնեն:
Յեթե մոտիկ տեղում այդպիսի կաթնային ըն-
կերություն կա, հարկավոր ե զնալ այնտեղ
և ծանոթանալ գործի հետ: Լավ կլիներ, յեթե
այնտեղ գնալիս իրենց հետ գյուղատնտես կամ
մասնագետ վերցնեն, վորպեսզի նա գյուղացի-
ներին բացատրի, թե ի՞նչը լավ ե, ինչը՝ վատ:

Գործի հաջողության համար հարկավոր ե,
վորպեսզի առաջուց հաշվեն, թե որական ինչ-
քան կաթ կարող են ստանալ: Ամեն մի ընկերու-
թյուն կունենա իրեն ծախքերը: Շենքի քրեն,
ծառայողի ոռնիկ, սառույցի վճար, ձիու ապ-
րուստ, պարագերի տոկոս, մի խոսքով բոլոր
ծախքերը պետք ինկատի առնել և այդ ծախ-
քերը կաթի գնի վրա ավելացնել:

Ասենք, թե որական 50 փութ կաթ են բե-
րում: Իսկ կաթնային ընկերության որական ծախ-
քերը 20 բուբլի յե: Կնշանակե, վոր կաթի ա-
մեն մի փթի վրա 40 կոպեկ ե ավելանում: Յե-

թե որական բերում են 100 փութ կաթ, ծախ-
սը կաթի ամեն մի փթին ընկնում ե 20 կո-
պեկ: Յեթե շատ քիչ կաթ են բերում, պարզ ե,
վոր ծախքերը մեծ են լինում և ընկերության
անդամները կաթից շատ քիչ ոգուտ են ստա-
նում: Այդ գեպքում ընկերություն հիմնելու մեջ
իմաստ չկա:

Մուկվայի նահանգում, վորտեղ կաթնային
ընկերությունների գործը շատ լավ ե գրված,
վորտեղ տարեկան տասնենգից մինչև քսան հա-
զար փութ կաթ են քաղաք բերում, կաթի մեկ փթի
վրա մի տարվա ընթացքում 15—20 կոպեկ վե-
րադիլ ծախս ե նստում: Աշնանը, յերբ կաթը
պակասում ե, ծախքերը մեծանում են և հասնում
մինչև 50 կոպեկի մի փթին: Ինչ վերաբերում
ե գարնանը, յերբ կովերը ծնում են և կաթը
առատանում ե, ծախքերը պակասում են և փթին՝
10 կոպեկ դառնում:

Հարկավոր ե նաև պարզել, թե ընկերությունը
ինչքան կաթ կարող ե ծախել: Յեթե ընկերու-
թյունը շատ կաթ ունի, բայց ծախելու տեղ չու-
նի, իսկ հեռու շուկաներ տանելը դժվար ե, այդ
գեպքում չպետք ե ընկերություն կազմել:

Այդ ամենը հարկավոր ե իմանալ նախ քան
ընկերություն կազմելը, հարկավոր ե քննել ու
պարզել: Այդ իմանալուց հետո հարկավոր ե ի-

մանալ, թե կաթը վո'րտեղից պիտի ստանան և
ձեռնոտո՞ւյե արդյոք ստանալը: Պատահում ե, վոր
կաթը ստացվում ե նաև հարկան գյուղերից:
Բայց գարնանը և աշնանը ճանապարհները փակ-
վում են: Այդ պետք ե աչքի առաջ ունենալ: Ճա-
նապարհի լավ կապը մեծ նշանակություն ունի
ընկերության համար:

Կաթնային ընկերության դժվար գործերից
մեկը ընկերության կառավարիչ ընտրելն ե: Ամեն
մի ընկերություն այդպիսի մի մարդ պիտի ու-
նենա. Դրա գործը շատ և շատ ե լինելու: Նա-
շատ աշխատանք կունենա և այդ պատճառով ել
հարկավոր ե, վոր նա ունիկով լինի: Նրա աշ-
խատանքը և մեծ ե, և պատասխանատու:

ՀԵՂՋ

Նա տալիս ե կաթի փողը, ծախսերի հաշիվ
և պահում, ընկերությանը հաշիվ ե տալիս, հե-
տեւում ե մաքրությանն ու կարգին, բանվորներ և
ծառայողներ վարձում և արձակում: Մի խոսքով
նրա ձեռքում ե գտնվելու ամբողջ գործ: Հաս-
կանալի յե, վոր այդպիսի մի գործի գլուխ կանգ-
նած մարդը ազնիվ պետքե լինի, չխմող, գոր-
ծունյա, խելացի և ընդհանուր գործի համար
սիրով աշխատող: Ընկերության կառավարչից
ե կախված գործ՝ հաջողությունը: Յեթե գործի
գլուխ կանգնած մարդը հարթեցող և կաշուակեր
ե ընկերությունը կքայքայվի:

Ընկերության բոլոր անդամների կողմից ընտրվում են հինգ մարդկարպեսզի ամեն ամիսքըն-նեն ընկերության գործերը, թե ինչպես են գնում գործերը, աեղն ե ընկերության կայքը:

Այդ հինգ մարդը վերաստուգիչ հանձնաժողով են կոչվում:

Յերբ նախնական հաշիվերը վերջացած են,
յերբ լավ և հավատարիմ մարդ կա գործը տա-
նելու համար, յերբ անհրաժեշտ չենքը ճարվել ե,
յերբ առաջին ամիսների համար գոնե մի քիչ
փող հավաքվել կամ ճարվել ե, այն ժամանակ ա-
պագա ընկերության անդամների ընդհանուր ժո-
ղով են հրավիրում: Հնարավորին չափ շատ մարդ
են կանչում ժողովի, վորոնց ժողովում հայտ-
նում են, թե ինչ ոգուտ կարող ե տալ կաթնային
ընկերությունը և ինչ վնասներ ե կրում զյու-
ղացին հիմա, յերբ այդպիսի ընկերություն չու-
նի: Հետո պայման են կապում և ստորագրում:

Պայմանի մեջ գրում են, վոր ընկերությունը նկատի ունի կաթի և կաթնային մթերքների նպաստավոր վաճառումը. վոր ընկերությունը կարող է այդ նպատակով գնել անհրաժեշտ կայք և ծառայողներ վարձել։ Հետո պետք է գրել Վոր ընկերության անդամները իրավունք չունեն բընց կաթը կամ կաթից պատրաստած մթերք-ները ուղարկներին ծախել։ Պետք է գրել նաև,

վոր կաթը պիտի ընկերությանը հանձնել սերը չքաշած և չթթված, կաթ չբերել—կովի ծնելուց հետո մի շաբաթվա ընթացքում, ինչպես նաև չբերել կովի հիվանդ ժամանակվա կաթը։ Պայմանի մեջ վորոշում են, թե ի՞նչ իրավունքներ ունի ընկերության ընդհանուր ժողովը և ինչ իրավունքներ՝ կառավարիչը։ Պիտի զրվի նաև, թե ի՞նչու համար ընկերության անդամը տուգանքի յե յենթարկվում և ի՞նչ գործի պատճառով կարող ե ընկերությունից հեռացնել։ Գրում են նաև, թե ի՞նչ կապիտալ ունի ընկերությունը. վո՞քան ե նրա հիմնական և պահեստի կապիտալը, և վորը ի՞նչի՛ վրա պիտի ծախսվի, և ի՞նչից ե ամեն մեկը կազմվում։

Ուրինակի համար, հիմնական կապիտալը կազմում ե անդամավճարներից, ոգութից, նվերներից, և մասնավոր մարդկանցից ու բանկից վերցված փոխառություններից։ Այդ գումարը ծախսվում է շենքը պատրաստելու, կահավորման ու ընկերության ընդհանառության վրա։

Պահեստի կապիտալը կազմվում է ոգուտից, կաթի փթից կամ դույլից ստացված հանումներից և տուգանքի գումարներից։ Պահեստի կապիտալը ծախսվում է պատահական վճառությունների ժամանակ՝ հրդեհի դեպքում և այլն։

Պայմանի մեջ պիտք եւ ասել Հյուսութիւն

մասին, ինչ կարելի յե նախորոք նկատել, վորպեսզի վերջը վեճի և անհամությունների տեղիք չտրվի: Կաթնային ընկերության ամեն մի նոր անդամ պիտի այդպիսի պայմանագիրն ստորագրի և հետո միայն կատարի այն, ինչ նրա մեջ գրած ե:

Ամեն մարդ ընկերության մեջ մտնում ե իր ազատ կամքով: Անա այդ պատճառով ել ինքն իր վրա պիտի հսկի, վորպեսզի ընկերությանը վնաս կամ վորևե անախորժ բան չնասցնի: Դրանում ե կայանում ընկերության կազմակերպությունը և ներքին կարգը: Այդ տեսակ կարգ ու կանոնից ե կախված ընկերության ուժը: Այդպիսի գործի մեջ վնաս չի կարող լինել:

Հիմա տեսնենք, թե ի՞նչպես պիտի գնան ընկերության գործերը:

Ամեն որ տասնյակ և գուցե հարյուրավոր գյուղացիներ բերում են կաթն ու հանձնում ընկերությանը: Այդ կաթը յերկաթուղով քաղաք ե ուղարկվում 50 կամ 100 վերստի վրայից: Հարկավոր ե, վորպեսզի կաթը քաղաք հասնի լավ դրության մեջ: Դրա համար ել անհրաժեշտ ե, վոր ընկերության անդամները կովը կթելիս մաքրություն պահպանեն. կթելուց առաջ ձեռները լվան, կովի ծծերը մաքուր ջրով լվան, կայեկած աման ունենան կաթի համար: Կթած կաթը քա-

մեն և յեթե հնարավոր ե, իսկույն տանեն: Յեթե հնարավոր չե տանել, այդ գեղքում պետք ե սառը տեղ դնեն ու առաջվա կթած կաթի հետ շխառնեն:

Կաթնատան ընդունողը կաթից հասկացող մարդ պիտի լինի: Նա բերած կաթը պիտի փորձի՝ թթված հո չե: Մի տեսակ ապակուց շինած գործիք կա, վոր մեծ ջերմաչափի յե նման, նըրանով կարելի յե իմանալ՝ կաթին ջուր խառնած ե, թե չե: Այդ գործիքը արեսմետը ե կոչվում: Յերբ իմացվեց, վոր կաթը լավ ե, լըցնում են ընդհանուր ամանի մեջ:

Կաթը ընդունելը շատ լուրջ գործ ե: Յեթե մեկը թթված կաթ բերի, իսկ ընդունողը չնայի ու լցնի ամանի մեջ, ամբողջ կաթը կփչանա: Մի անբարեխիղճ անդամի յերեսից ամբողջ ընկերության յերեսին վատ խոսք կգա:

Կաթը ընդունելուց հետո, մինչև քաղաք ճամբելը ամանները սառույցի վրա յեն դնում:

Կաթը ձմեռ ժամանակը քաղաք ուղարկելիս հարկավոր ե, վորպեսզի կաթը չսառչի: Դրա համար պետք ե տակը խոտը փոել, ամանի շուրջը շորեր փաթթել: Ամառ ժամանակն ել ե հարկավոր ամանները ծածկել շոքից, վորպեսզի կաթը չթթվի:

Տարվա այն ամիսներին, յերբ հնարավոր չե

քաղաք կաթ տանել՝ գարնան և տշնան վաս յեղանակներին, կաթից շինում են յուղ, պանիր, շոռ։ Այդ ապրանքները պահվելու յեն սառցարանում, վոր ամեն մի ընկերություն պետք եռնենա։

Կաթնային ընկերության ամենազլխավոր գործը լավ և համար շենք պատրաստելն ե (գործարան), վորտեղ ընդունում են, պահում և կաթից մթերքներ շինում։ Լավ և մեծ ընկերությունը պիտի իրեն ույժերը և հոգսը այն ուղղությամբ տանի, վորպեսզի իրեն համար գործարան շինի և լավ աշխատեցնի։

Կաթնային գործի մասնագետ Ֆրիդալինը գործարանի համար հետեյալ ցուցմունքներն ետալիս։ Նա ասում ե, թե այն գործարանը, վորորական 100-ից մինչև 150 փութ կաթ ե ստանում, պիտի ունենա հինգ սենյակ։

Առաջին սենյակը՝ ընդունարան, վորտեղ հավաքվում են կաթ բերողները՝ ընկերության անդամները։ Այս սենյակը գործարանի մյուս սենյակներից առանձին ելինելու, վորովհետև յեկողը հետը ցեխ և փոշի յերբում։

Յերկըորդ սենյակը—ջուր տաքացնելու յեկլալու սենյակ։ Այստեղ ե գտնվում ջուր տաքացնելու ամանը, վորի մեջ են դնում կաթով և սերով ամանը։ Այս սենյակումն են ամանները

լվանում, զրա համար ել հատակը հող չպիտի լինի և մեկ ել՝ ջուրը անցնելու տեղ եռնենալու։

Յերրորդ սենյակը—սեպարատորի սենյակնե։ Դա մի վոքքիկ սենյակ ե, վորտեղ սեպարատորի միջոցով կաթը սերից բաժանում են։

Չորրորդ սենյակը յուղ պատրաստելու սենյակն ե։ Այստեղ են գտնվում յուղ պատրաստելու գործիքները և յուղը մշակելու սեղանները։ Այստեղ են պատրաստում և մածունը։

Հինգերորդ սենյակը—սաոցարանն ե։ Այստեղ սարքում են կլոր սառցարան և սառն ջրի բակեր՝ կաթը պահեցնելու համար։

Ամեն մի գործարանի համար անհրաժեշտ եռնենալ սառցարան և պահեստի տեղ։

Յեթե կաթի քանակը 50-ից մինչև 100 փութ ե, վոքը գործարան են շինում։ Այդ դեպքում ֆրինդալինը առաջարկում է ունենալ 4 սենյակից բաղկացած շենք և սառցարան։ 1) մի ընդունարան, վորտեղ կարելի յե և ամանները լվանալ, 2) սեպարատորի սենյակ, 3) յուղ հարելու սենյակ և 4) սառցարան—պահեստ և տան կողքին սառույցի համար մառան։

Յերբ կաթնային ընկերությունները կսկսեն իրենց գործը լավ հիմքերի վրա դնել և լայնացնել, քաղաքում նրանք իրար կհանդիպեն։ Վորպեսզի

Նրանք իրենց ապրանքների գները չիջեցնեն և իրար վսաս չտան,—կարող են կազմել կաթնաշյին միություններ։ Յեթե կաթնային ընկերությունները իրար հետ միություն չկազմեն, քաղաքի գնողները կսկսեն ջոկել, թե ո՞վ ե եժան գնով պանիր, յուղ, կարագ ծախում։ Ընկերությունները իրար հետ մրցելու կարիք չունեն։

Գյուղացիական կաթնային միությունները նույն են, ինչ վոր կաթնային ընկերությունները, միայն այն տարրերությամբ, վոր կաթնային ընկերության մեջ մտնում են առանձին գյուղացիներ, իսկ միության մեջ ամրող ընկերություններ։ Միությունը մթերքների գին ե նշանակում, և վոչ վոք իրավունք չունի ավել կամ պակաս ծախելու։

ԶՎԻ ԿՈՌՊԵՐԱՏԻՎ ՎԱՃԱՌՈՒԻՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ.

Այժմ անցնենք ձվի գործին։ Մեր գյուղերում հավի ձվի գործի վրա նայում են այնպես, ինչպես կաթի գործի վրա։ Գյուղացին իր հավերի ձուն ծախում ե նույն չարչիներին ու խանութպաններին։ Շատ ժամանակ պատահում ե, վոր գյուղացին ձուն փոխում ե լուցկու, նափթի և ուրիշ ապրանքների հետ։ Զարչին, իհարկե, այդ գործումն ել ե աշխատում։

Մեզանում ձվի գործը կնոջ գործ ե համարվում։ Ո՞վ ե տեսել, վոր տղամարդը խառնվի այդ գործին։ բայց յեթե հիմա մի քանի թվեր տանք, պարզ կլինի, թե ինչ մեծ նշանակություն ունի ձվի գործը։

Պատերազմից առաջ Ռուսաստանը արտասահման եր ուղարկում այնքան ձու, վորքան և վոչ մի պետություն։ 1923 թվին Ռուսաստանից յերեք ու կես միլլիարդ ձու յե ուղարկվել արտասահման։ Յեթե վերցնենք Ավստրիան, Բելգիան, Հոլլանդիան, Գերմանիան, Դանիան, Յեգիպտոսը, Իտալիան, Ամերիկան, Ֆրանսիան և ուրիշները, այդ յերկրները միասին վերցրած մի տարվա ընթացքում յերեք միլլիարդ չորս հարյուր միլիոն ձու յեն արտահանել։ Կնշանակե Ռուսաստանից հարյուր միլլիոնվ պակաս։ Այդ ձվերը հավաքել են գյուղացիներից չարչիները, վորովիետև ուռւ կալվածատերերը ձվի գործով չեյին զբաղվում։

Բանից դուրս ե գալիս, վոր ձվի գործը շատ մեծ ոգուտ կարող ե բերել թե՛ գյուղացուն և թե՛ պետությանը, յեթե նրա վրա մի քիչ ուշադրություն դարձնի գյուղացին, թե ինչպես ե հարկավոր հավ պահել, ճուտ մեծացնել։ Դրանց մասին շատ գրքեր կան զրած, վորտեղ ամեն ինչ մանրամասն բացատրվում ե։ Հիմա

մենք կուղելինք խոսել գյուղացու հետ, թե ինչպես պետք ե ձուն ծախել, ի՞նչպես անել, վորպեսզի ձվից ստացած ոգուաը գյուղացո՛ւ գըշպանը գնա, և վոչ թե չարչի — խանութպանի:
Ահա, թե ինչպես:

Ամառվա սկզբին, յերբ ձվերը գյուղացու մոտ շատանում են, գյուղի կոռպերատիվը իր անդամներից մեկին հանձնում ե ձու հավաքելու գործը:

Այդ լիազորը, ինչպես և ամեն մի լիազոր, պետք ե ազնիվ և գործունյա մարդ լինի: Լիազորը իր շուրջն ե հավաքում մի քանի յերիտասարդ տղա և աղջիկ — ձու հավաքողներ: Չու հավաքողները գլխավորապես գյուղատնտեսական ընկերության անդամների յերեխաներն են լինում:

Ամեն մի ձու հավաքող յերիտասարդ ունի իր կողքին կողով, վորի մեջ կարող ե 300—400 ձու տեղափորվել: Անձրկից ձվերը պաշտպանելու համար կողովը ծածկոց պետք ե ունենա: Չու հավաքող յերիտասարդը շըջում ե տնից-տուն և հավաքում: Ձվերը ջոկելու համար թղթից շինած խողովակ ունի, վորի մեջով ամեն մի ձուն նայում ե և գնում ընդունված գնով: Վճարելիս տալիս ե ստացական, վորի մեջ գրում ձու ծախողի ազգանունը, անունը, ձվի քանակը և գինը: Գյուղացին այդ ստացականը պետք ե պահի: Յերբ

կոռպերատիվը ձուն ծախի և ոգուաը հաշվի, ահա այդ ստացականներով գյուղացիք ոգուատից լրացուցիչ մաս կստանան:

Հենց վոր ձու հավաքողը կողովը լցրեց, իսկույն տանում ե կոռպերատիվ: Յեթե ուրիշ գյուղումն ե գտնվում, տանում ե առաջուց նշանակված տեղը ու հանձնում լիազորին, վորը նույնպես քննում ե ձվերը, իսկ յերեկոյան տանում կոռպերատիվ:

Ձվերը սայլի վրա յեն դարսում: Ամեն մի ձվի տակն ու շուրջը հարթ գնում, վորպեսզի ճանապարհին չջարդվին: Արկղները ծածկում են խսիրով և չվանով կապում:

Շուկաներում ձուն ուղղակի սայլով են գնում: Ստացած ոգուաը ստացականների համաձայն բաժանում են ընկերության անդամներին, իսկ վոչ անդամները ոգուատի կեմն են ստանում:

Շատ լավ կլինի, յեթե գյուղի կոռպերատիվը այդ հավաքած ձվերը տա վո՛չ թե քաղաքի մասնավոր խանութպաններին, այլ կոռպերատիվ հիմնարկություններին: Յերբեմն պատահում ե, վոր մասնավոր մարդիկ և խանութպաններ ավելի յեն գին տալիս, քան կոռպերատիվները, բայց դա ժամանակավոր բան ե:

ՄԵՔԵՆԱՆԵՐ ԳՆՈՂ ՀՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Գյուղացու համար շատ դժվար ե իր ուժեցով գնել վորևե գյուղատնտեսական մեքենա: Պատահում ե նույնիսկ, վոր հասարակ խոփ զընելու համար փող չի լինում:

Յեթե լավ մտածես, բանից դուրս ե գալիս, վոր գյուղացու համար ոգտակար չի մեքենա գնելլ: Որինակի համար: Գյուղացին գնեց ցանող, հնձող կամ մի ուրիշ մեքենա: Նախ, դրա համար մեծ փող ե հարկավոր տալ: Յերկրորդ գյուղացու հողը շատ քիչ ե, ամենաշատը տարվա մեջ մի քանի որ ե գործածելու, իսկ մնացած ժամանակները մեքենան մնալու յե առանց գործի: Դրանից բացի, նրա պահպանման վրա վրա փող պետք ե ծախսել: Նշանակում ե, վոր այդպիսի մեքենայի վրա ծախսած փողը անուգուտ պառկած կմնա, իսկ յեթե այդ փողը գյուղացին այլ բանի վրա ծախսեր, նա ամբողջ տարին յեկամուտ կունենար:

Ուրիշ բան ե, յեթե նույն ցանող մեքենան գնեն մի քանի գյուղացիներ միասին: Նախ ամեն մեկը քիչ փող կվճարի և ամեն մեկը կանի իր նույն գործը. հունձը վերջանալուց հետո յեթե մնացած ժամանակի մեքենան անգործ կմնա,

դա այնքան ել ցավ չի բերի, վորովհետեւ քիչ փող են ծախսել:

Այսին մի գյուղացի լավ գիտի, վոր մեքենայով հերկած արտը լավ բերք ե տալիս:

Այժմ գյուղացիական ամեն մի աշխատանք կարելի յե անել մեքենայով, վորը և՛ արագ ե գործում և՛ լավ հետևանք տալիս: Այդ մասին շատ գրելու կարիք չկա, վորովհետեւ ամեն մի գյուղացու համար դա հասկանալի յե:

Վերցնենք մի որինակ: Հողը մշակել կարելի յե գութանով, արորով և սակեռվի խոփով: Բոլոր գյուղատնտեսները միաձայն ասում են, վոր փորձերը ցույց են տվել, թե սակեռվի խոփը գործածելիս միշտ ել հողը լավ ե մշակվում: Ասենք թե հավաքվեցին մի քանի գյուղացի և մի-ամին գնեցին 20 կամ 30 սակեռվի խոփեր:

Այդպիսի մեծ քանակով գնած խոփերը ավելի եժան կնստեն, քան թե մի հատը: Մեկ ել վոր չորս կամ հինգ գյուղացի մի այդպիսի խոփ ավելի լավ կարող են ոգտագործել, իսկ ամեն մի գյուղացի պետք ե վճարի խոփի քառորդ կամ հինգերորդ մասը:

Նույնը վերաբերվում ե նաև մնացած գյուղատնտեսական գործիքներին:

Վերցնենք հենց ցանքսի խնդիրը:

Գյուղացուն լավ հայտնի յե, վոր ձեռքի ցան-

քսի մեքենայով ցանքսի մեջ շառ մեծ տարբերություն կա: Մեքենայի ցանքսը ավելի արդյունավետ է, բայց ցանող մեքենան թանկ արժի:

Յեթե գյուղացու ցանելիք արալ 50—60 դեստին է, շարքացան մեքենայի գինը մի տարվա ընթացքում գուրս կգա: Փորձած բան է, վոր ձեռքով ցանած արտում ամեն մի դեսյատինի համար 2—3 փութ ավելի յեցը ցընում: Ուրեմն 50—60 դեստինի վրա 100 փթից ավելի: Բացի դրանից, շարքացան մեքենայով ցանած արալ ամենաքիչը 6—7 փութ ավելի ցըրեն ետալիս դեսյատինից: Այդ ել վոր վրա գանք, գուրս կգա 350—400 փութ: Այդքան փթի գնով, ինարկե, լավ տեսակի և թանկարժեք շարքացան մեքենա կարելի յեց գնել: Բայց ի՞նչ անենք, յեթե գյուղացին այդքան հող չունի:

Այդ դեպքում մի քանի ընտանիք կարող են միանալ: Մի շարքացան մեքենան կարող ետառայել 10—15 ընտանիքի, որական 3 դեսյատին ցանելով: Յեթե այդ 10—15 ընտանիքը հավաքվեն և միասին մի շարքացան մեքենա գնեն, դա այնքան ել դժվար չի լինի նրանց համար: Ամեն մինը 10—15 ըուբլի պիտի գնի: Հենց առաջի տարվա ոգուտը շարքացան մեքենայի ծախսը կծածկի: Մնացած տարիների ընթացքում մեքենան միայն ոգուտ կրերի:

Այժմ վերցնենք հունձը հավաքելու գործը: Հնձել կարելի յեց մանգաղով, գերանդիով, հընձող մեքենայով և հնձող-կապող մեքենայով:

Ամենալավ հնձողը մանգաղն է, վորովհետեւ սերմերը քիչ են թափվում և մեկ ել՝ հարզը (դարմանը) շատ ետացվում: Բայց մանգաղով հնձելու համար թե՛ շատ ժամանակ է հարկավոր և թե՛ շատ աշխատանք: Մի դեսյատին արալ հնձելու համար հարկավոր ե մի մարդու 10 որվա աշխատանք կամ 10 մարդու աշխատանք մի որվա ընթացքում: Գերանդիով հնձած արտը այնքան ել մաքուր չի լինում, բայց յերեք անգամ քիչ ժամանակ և աշխատանք է հարկավոր:

Հունձը հավաքելու համար ժամանակը շատ մեծ նշանակություն ունի: Հնձի ժամանակը ձգձգելուց կամ հետաձգելուց, բերքի քանակը կարող ե պակասել: Այդ ժամանակ հասունացած արտի ցորենը կամ գարին կարող ե թափվել: Մի յերկու կամ յերեք որվա ընթացքում ամեն մի դեսյատինից 5—10 փութ հացահատիկ ե պակասում:

Հնձող մեքենայի աշխատանքն ավելի անմաքուր է, քան գերանդունը, բայց մի որվա ընթացքում մեքենան կարող է հինգ դեսյատին հնձել: Ամեն մի դեսյատինի համար 3 մարդ ե հարկավոր, վորպեսզի քաղածից խուրձեր կապին:

Ամենաարագ աշխատանք կատարողը հնձող-
կապող մեքենան եւ Այդ մեքենան մի որվա ըն-
թացքում 4 դեսյատին եւ հնձում և խուրձեր կա-
պում: Այդ աշխատանքի համար հարկավոր եւ մի
մարդ և յերեք ձի: Ամեն մի այդպիսի մեքենա
կարժե 300, 400, 500 ըուբլի: Այդպիսի մեքե-
նաներ գնել կարող են միայն ընկերությունները:

Մենք տեսանք, վոր հունձը հավաքել կարե-
լի յեւ արագ, թեթև և եժան կերպով, յեթե զյու-
ղացիք միանան և միասին մեքենաներ գնելու
համար ընկերություն կազմեն:

Հիմա յել անցնենք կալին: Թե ինչ տաժա-
նակիր աշխատանք եւ կալի գործը, ամեն մի
զյուղացի լավ եւ իմանում: Կալսել կարելի յեւ
նույնպես մեքենայով: Կալսող մեքենաները թանկ
են, բայց կարելի յեւ գնել նույն միջոցով:

Մի ձիով կալսելու մեքենան կարող եւ 50
տնից բաղկացած զյուղի արտերի ցորենը կալ-
սել: Յեթե 50 տուն հավաքվեն և ամեն մեկը
10 ըուբլի դնի, ահա և քեզ մեքենան:

Սերմերը ջոկելը և մաքրելը նույնպես կա-
րելի յեւ մեքենայով անել: Այդ գործը կարելի
յեւ անել և ձմեռը, յերբ զյուղացին ազատ եւ
դաշտային աշխատանքներից: Այդպիսի մեքենա-
ները այնքան ել թանկ չեն, բայց ընկերությամբ
գնելն ավելի ձեռնտու յեւ, քան առանձին առան-

ձին: Յեթե զյուղացին փողը չխնայի և գնի այդ
մեքենան, զարնանը թե՛ լավ սերմացու կունե-
նա և թե աշնանը՝ լավ բերք:

Մենք տեսանք, վոր զյուղացու աշխատան-
քի ամեն մի գործը կարելի յեւ մեքենայով ա-
նել: Մեքենան թե՛ արագ եւ կատարում, թե՛ թեթև
ու լավ, և թե գործը եժան եւ նստում: Գյուղացին
կարող եւ մնացած ազատ ժամանակը ուրիշ բա-
նով զբաղվել կամ հանգստանալ: Այդ ամենը կա-
րելի յեւ ունենալ կամ ստանալ, յեթե զյուղա-
ցիք իրար հետ մեքենայի ընկերություն կազմեն:

Այդ տեսակ ընկերության շնորհիվ զյուղա-
ցիք բացի լավ բերքից, նաև լավ կյանք կարող
են ստեղծել:

Մեքենա գնելու համար ընկերություն կազմելը
չի նշանակում, թե զյուղացիք անպատճառ իրար
պիտի խառնեն իրենց հողերը: Միայն մեքենա-
ներն են ընդհանուր, իսկ ամեն մարդու հողը
տուանձին ել կմնա:

Ամեն մի զյուղացի իր ընտանիքով իր հողի
վրա յեւ աշխատում: Միայն ընկերություն կազ-
մող զյուղացիք վարոշում են, թե վո՞ր ո՞ւը ո՞ւմ
մոտ եւ աշխատելու մեքենան: Հենց վոր հերթին
հասավ մի վորեե զյուղացու, նա ինքն եւ աշ-
խատեցնում մեքենան:

Յերբ այդպիսի ընկերություն եւ կազմվում,

գյուղացիք միասին են հերկում բոլորի արտերը:
Այդպես հերկելը մի շարք ոգտակար կողմեր ունի:
Հենց վոր հերկելը վերջացավ, ամեն մի գյուղացի
իր արտի տերն ե, ինչպես ուզում ե թող ցանի:

Կարելի յե նաև աշխատանքը միացած ուժ-
տերով անել, իսկ աշնանը իրար մեջ բաժանել:
Յերբ գյուղացիք իրենք գան այն յեզրակացու-
թյան, վոր ընկերական աշխատանքն ավելի ոգ-
տակար ե, այն ժամանակ ել առանձին առան-
ձին չեն մշակի իրենց արտերը: Առայժմ մեր
գյուղացիք սովոր չեն այդպիսի աշխատանքի,
դրա համար ել այստեղ միայն մեքենայի ընկե-
րությունների մասին ենք խոսելու:

Մեքենաներ կարելի յե գնել գյուղատնտե-
սական կոռպերատիվի միջոցով: Նախ՝ դա շատ
հեշտ կլինի, մեկ ել վոր, յեթե փողը չի բավա-
կանանում, ընկերությունը կարող ե տալ իր
ազատ փողերից: Նոր կազմվելիք ընկերության
անդամները անդամավճարները հավաքում են փո-
ղով կամ հացահատիկով, իսկ փողի այն մասը, վոր
չի բավականանում, պարտավորվում են տալ
աշնանը, նոր հունձը հավաքելուց հետո: Ընկե-
րությունը կարող ե իր միջից ընտրել մի լիա-
զոր, վորը կոռպերատիվի հետ բանակցություն-
ներ ե վարում և հաշիվ տեսնում:

Մեքենայի ընկերությունը կարող ե նաև ա-

ռանց կոռպերատիվի ոգնության մեքենաներ
գնել: Դրա համար ընկերությունը Հողբաժնում
պիտի իրեն արձանագրել տա և շրջանային գյու-
ղատնտեսական կոռպերատիվի միության անդամ
դառնա: Հենց վոր այդ կատարվել ե, ընկերու-
թյունը կարող ե դիմել գյուղատնտեսական կամ
կոռպերատիվ բանկերին, վորպեսզի փոխարինա-
բար փող ստանա մեքենա գնելու համար:

Այդպես են անում, յերբ նոր մեքենաներ են
գնում: Բայց գյուղացիք կարող են և իրենց ու-
նեցած գործիքներն ոգտագործել: Այդ գեպ-
քում ամեն մի գործիքը գնահատվում ե: Որի-
նակի համար մի խոփը կարժենա 30 փութ ցո-
րեն, ցանող մեքենան—300 փութ և այն: Ըն-
կերությունը հաշվում ե, թե ինչքան մեքենա
ունի և ի՞նչ կարժենան մեքենաները և վորքան
հող ամեն տարի պիտի մշակեն: Ասենք թե հա-
վաքած մեքենաները 1000 փութ ցորեն կարժե-
նան, իսկ վարելու և մշակելու հողի քանակը 200
դեսյատին ե: Կնշանակի ամեն մի գեսյատինի
վրա ընկնում ե անդամավճար 5 փութ ցորեն:
Ամեն մի գյուղացի այդ հաշվով ել անդամավճար
ե մտցնելու: Յեթե գյուղացին չորս դեսյատին
հող ունի, մեքենայի ընկերության գործիքնե-
րից ոգտվելու և անդամ դառնալու համար հար-
կավոր ե, վորպեսզի նա 20 փութ ցորեն տա:

Ասենք, թե ընկերության անդամ՝ պյուղացին,
վոր 4 դեսյատին հող ունի, յերկու խոփ և
տալիս ընկերությանը: Ի՞նչ է ստանալու:

Յերկու խոփը 60 փութ ցորեն արժի: Հար-
կավոր և 20 փութ անդամագնարը հանել այդ փու-
մարից, կնշանակե նա 40 փութ ցորեն և ստա-
նում և ընկերության անդամ դառնում, ոգտվե-
լով ընկերության բոլոր գործիքներից:

Յեթե ընկերության անդամը վոչ մի մեքե-
նա չունի, իսկ նրա հողը 3 դեսյատին ե, կնշա-
նակի նա պիտի 15 փութ ցորեն տա: Իսկ դրա
փոխարեն կդառնա մեքենայի ընկերության ան-
դամ և կողավի ընկերության բոլոր գործիքնե-
րից:

Պարզ ե, վոր ընկերությունը սկզբներում
աղքատ և լինում: Մի յերկու տարուց հետո
ընկերությունը թե՛ լավանում ե և թե՛ հարստա-
նում: Լավ և ազնիվ մարդկանցից բաղկացած
ընկերությունները յերբեք մնաս չեն անի:

Սկզբներում, յերբ ընկերությունը դեռ հա-
րստա չե, գործիքները ընկերության անդամնե-
րի մոտ են պահվում: Հենց վոր գործերը լավ
գնացին, հարկավոր և գյուղում առանձին շենք
ունենալ, վորտեղ կարելի կլինի պահել գործիք-
ները:

Մի քանի տարուց հետո ընկերության ամեն

մի անդամը կհասկանա, թե ինչ մեծ ոգուտ և
այլպիսի ընկերությունը և ինչպիսի ույժ ունի
միացած գյուղացիությունը:

Ճիշտ և ասած, թե «գեղ կանգնի, գերան
կկոտրի»: Գյուղացու ույժը միության ու կաղ-
մակերպության մեջն ե: Իսկ մենակ գյուղացին
միշտ ել խեղճ կլինի: Պատահում ե, վոր աշխա-
տաքի ժամանակ կամ ձին կամ յեզներից մեկը
հանկարծ սատկում ե. խեղճ գյուղացին այդ
գեղքում մնում ձեռքը ծացը: Աշխատանքի տ-
մեն մի բոպեն թանկ ե: Յեթե ցանքսի, հնձե-
լու, կալսելու ժամանակն անցավ, նա մի ամ-
բողջ տարի սրա նրա գուռը գերի յե լինելու:
Իսկ յեթե նա կազմակերպված լինի, ընկերու-
թյան անդամ,—այդ ամենից աղատ կլինի:

Գյուղացիների և բանվորների կյանքի ճա-
նապարհին և նրանց զլխի վերի մի մեծ ու
ծանր բեռ ու արգելք կար, վոր թույլ չեր տա-
լիս գյուղացիներին ու բանվորներին միանալ:
Այդ թագավորի կառավարությունն եր: Այժմ
այդ իշխանությունը բանվորների ու գյուղացի-
ների ձեռքով վոչնչացված ե: Այժմ խորհրդա-
յին իշխանություն ե, վորի նպատակն ե՝ բան-
վորներին ու գյուղացիներին տանել գեպի լու-
սավոր կյանք: Այժմ իշխանությունը բանվո-
րացյուղացիական ե, այդ պատճառով ել նա

աշխատավոր ժողովրդի աշխատանքն ու կյանքը
լավացնելու միջոցներ ե վնատում և հոգում:

Հարկավոր ե, վորպեսզի գյուղացին լավ հաս-
կանա և ոգտվի:

Ամեն մի գյուղացի լավ գիտի, վոր արտի
բերքը լավացնելու համար հարկավոր ե հողը
լավ մշակել, պարաբռացնել: Այդ աշխատանքը
գյուղացին կատարում ե ամեն տարի և այն ել
այն հողի վրա, վոր ցանքի համար պետքական
ե: Բայց ի՞նչ կարող ե անել գյուղացին ճահ-
ճային, անջուր տեղերում: Պարզ ե, վոր այդ-
պիսի տեղերը բերը դարձնելու համար նախ
քան ցանքսին անցնելը հարկավոր են ուրիշ մի-
ջոցներ: Ճահճային տեղը արտ դարձնելու հա-
մար պետք ե նախ և առաջ ճահիճը չորացնել,
իսկ անջուր տեղերում՝ ջրանցքներ շինել:

Այն աշխատանքները, վոր մարդիկ կատարում
են ճահիճը չորացնելու համար, անջուր տեղերը
ջրանցք անցկացնելու, ավագոտ տեղերը ամ-
րացնելու համար — այդ աշխատանքը մելիորա-
ցիա յե կոչվաւմ:

Խորհրդային իշխանության յերկրներում շատ
տեղեր կան, վորտեղ անձրեսի և ջրի պակասու-
թյուն ե զգացվում: Ամեն մի գյուղացի լավ գի-
տի, վոր ջրի պակասությունից արտը վոչ մայն
լավ հունձ չի տա, այլև կարող ե սով լինել:

Յեթե այդ տեղերը ջրանցքներ անցկացվեն
և անհրաժեշտ աշխատանք կատարվի, պարզ ե,
վոր գյուղացիք այլևս վտանգի չեն յենթարկվի:

Բայց ամեն մարդու ել հայտնի յե, վոր վոչ
մի մենակ գյուղացի իր ուժերով և իր կարողու-
թյամբ չի կարող այդպիսի մեծ աշխատանքի
ծանրությունը իր վրա առնել: Մեկ ել, վոր այդ
աշխատանքն հարկավոր ե բոլորին:

Կան տեղեր, վորտեղ գարնան անձրեներից
հետո ջուրը հավաքվում ե, ճահիճ կազմում: Այդ
ճահիճները վնասակար են: Նախ և առաջ ճահիճ
առաջացած տեղը չի կարելի մշակել: Հետո, չի
կարելի ճահիճների վրայից անցնել ուրեմն զըժ-
վարանում ե հաղորդակցությունը: Վերջապես՝
ճահճային տեղերն առաջ են բերում մի շարք
հիվանդություններ, վորոնք չափազանց վնասա-
կար են: Որինակի համար՝ մալարիան:

Գյուղացին իհարկե շահագրգուված ե, վոր և
հողը կարողանա մշակել, և լավ ճանապարհներ
ունենա, և ճիվանդություններից ազատ լինի:

Գյուղացին մենակ կարո՞ղ ե իր վրա վերց-
նել ճահիճները չորացնելու գործը: Չե, չի կա-
րող: Այդ գործը ընդհանուրի գործն ե և բոլորի
համար ել անհրաժեշտ:

Անա թե ինչու անհրաժեշտ ե կազմել մե-
լիորատիվ ընկերություններ:

Յերբ գյուղացիք վերջնականապես վորոշեն,
թե իրենց հարկավոր և այդպիսի մի ընկերություն կազմել նրանք պետք և հավաքվեն և
գյուղատնտեսի հետ կանոնադրություն կազմեն։
Կարելի յե մի ուրիշ մելիորատիվ ընկերության կանոնադրությունը վերցնել և նրա համաձայն կազմել։ Մի որինակելի մելիորատիվ կանոնադրություն կա, վոր հաստատվել և Հողգողկոմի գյուղատնտեսական կոռպերացիայի գըլխափոր վարչության կողմից 1921 թ. փետրվարի 8 ին։

Այդ կանոնադրության մեջ ասված և, թե ի՞նչ և ուզում անել ընկերությունը, քա՞նի նորուց և նա բարկացած, բոլո՞րն են արդյոք ընկերության անդամ և ելի ուրիշ պայմաններ։

Ի՞նչ միջոցներ ունի ընկերությունը։ Ընկերության միջոցները կազմվում են անդամավճարներից և փոխառություններից։ Ընկերության ժողովը նշանակում է, թե ամեն մի անդամը վո՞րքան անդամավճար և տալու։ Ի՞նչպես են ընկերության գործերը կառավարվում։ Ի՞նչ իրավունքներ ունեն ընկերության ընդհանուր ժողովը ու վերաստուգիչ հանձնաժողովը։

Պատահում է, վոր ժողովում վորեն հարցի մասին անդամների կարծիքը բաժանվում է։
Այդ դեպքում փոքրամասնությունը յենթարկ-

վում և մեծամասնության կարծիքին։ Յեթե վորե կամ գյուղում կամ շրջանում մեկիորատիվ աշխատանքներ կան, ճահիճ կա, ջրի պակասություն և զգացվում և այն, յեթե գյուղի կամ շրջանի գյուղացիության մեծ մասը ուզում և աշխատանք սկսել վորպեսզի իրեն ազատի չտրիքներից, իսկ փոքրամասնությունը չի ուզում, այդ դեպքում ընկերությունը կազմվում է, իսկ փոքրամասնությունը ուզե չուզե պիտի անդամ դառնա ընկերության։

Ասենք, թե ճահիճի տեղը, աշխատանքը վերջացնելուց հետո, լավ խոտի տեղ յեղավ, ճանապարհ բացվեց, հիվանդությունները վերացան։ Հետո վոր այդ բոլորից պիտի ոգտվի գյուղի կամ շրջանի գյուղացիությունը։

Մելիորատիվ ընկերությունների լավացրաց հողամասերը հողաբաժնման չեն յենթարկվի։ Ընկերության անդամները պարտական են աշխատել, իսկ այդ դեպքում, յերբ իրենք չեն կարող, հրավիրում են մասնագետ, —ինժիներ, կամ գյուղատնտես։

Յեթե ընկերության անդամ և հարեան վորեն խորհրդային տնտեսությունը, ապա նա յել և աշխատանքին մասնակցում, նա տալիս և համապատասխան քանակությամբ գործիք և բանվորներ։ Վորքան խորհրդային տնտեսությունը

ավելի շատ հող ունի, վոր պետք ե բարելավվի,
նա ավելի յե բանվորներ ուղարկում:

Միաբան աշխատող մելիորատիվ միություն-
ները տասը տարվա ընթացքում մեր յերկրում
չեն թողնի մի թիզ հող, վորն անմշակ մնա:

ՈՒՐԻՇ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ.

Գյուղական ամեն մի գործ կարելի յե միա-
ցնել և ընկերություն կազմել:

Պտուղներն ու բանջարեղենները ծախելու ա-
մենալավ միջոցը կոռպերատիվն ե: Այդ մթերք-
ները և պտուղները շատ շուտ են փչանում: Դրա
համար ել այգեգործը կամ պարտիզանը աշ-
խատում ե շուտ ծախել: Ցեղե գյուղացիները
միանան և կոռպերատիվ կազմեն, նրանք կա-
րող են պտուղները լավ և համար արկղնե-
րի, կողովների մեջ դնել և ուղարկել ուր վոր
հարկն ե:

Դետնախնձորի (կարտոֆիլ) գործը: Այդ գործը
շատ ձեռնտու յե: Կարտոֆիլի միությունը կա-
րող ե գյուղացու ամբողջ ընտանիքի դրությունը
բարելավվել: Որինակի համար, կաստրամիյ նա-
հանգի Շունդելսկի միությունը ամեն մի դեմքա-
տին հողից 2 հազար փութ կարտոֆիլ ե ստա-
նում: Հիմա այդ ընկերությունն ունի իր ելեք-

տրական կայարանը, իր ջրաղացները և այլ
գործարաններ: Համամիութենական գյուղա-
տնտեսական ցուցահանդեսին այդ միությունը
առաջին մրցանակն ստացավ: Այդ ամենը կոռ-
պերատիվի միջոցով ե ստացվել:

Կենդանաբուծական ընկերությունները իրենց
նպատակն են դնում կովերի, ձիերի, վոչխար-
ների, խոզերի տեսակները լավացնել: Ընկերու-
թյունը գնում է լավ տեսակի արու կենդանիներ,
ունի կենդանիներ պահելու համար հատուկ տե-
ղեր: Ընկերության անդամների անասուններից
լավերը պահում են բազմացնելու համար: Կենդա-
նիների ցուցահանդեսներ են կազմում, ձագերը
մեծացնելու համար միջոցներ են ձեռք առնում:

Կարելի յեր մի շարք ուրիշ տեսակի միու-
թյունների մասին ես խօսել, վորոնցով գյուղացու-
կյանքը կբարելավվեր: Որինակի համար՝ մեղվա-
բուծություն, բժշկական բույսեր հավաքելու,
բամբակի մշակման և այլն, և այլն: Գյուղի կյան-
քի բոլոր կողմերն ել կարող են կոռպերացիայի
առարկա դառնալ: Այն ժամանակ գյուղացին կո-
ռպերատիվից հեռու վոչ մի քայլ չի անի: Ամեն
ինչ կտա կոռպերատիվին, ամեն մի հարկավոր
բան կտանա կոռպերատիվից: Այդ գեպքում գյու-
ղացին կհարստանա, կլուսավորվի, կուլտուրա-
պես առաջ կգնա:

ՎԱՐՏԵՂԻՑ ՓՈՂ ՎԵՐՅՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ.

Դրա համար յերկու միջոց կա, առաջինը անդամավճարները, յերկրորդը՝ փոխառությունն Պարզ ե, վոր ընկերությունը վորքան շատ անդամավճար ստանա, շատ անդամ ունենա, այնքան հեշտ կլինի հիմնարկություններից և բանկից փոխառություն վերցնել:

Անդամավճարները ստացվում են վոչ միայն փողով, այլև հացով, բամբակով, մեքենայով, — փողի արժեքի հաշվով:

Անդամավճարի գումարը ընկերության ընդհանուր ժողովն են նշանակում:

Փոխառության համար ընկերությունը տալիս են համապատասխան ստորագրությունն, Փոխառության գումարը վորոշում ե ընկերության ընդհանուր ժողովը, վորը և նշանակում ե վեճարման ժամանակամիջոցը: Փոխառության համար ընկերությունը վճարում ե տոկոս:

Ընկերությունը կարող են նաև այսպիսի միջոցով փող ստանալ: Ընկերության անդամները հոգի վորոշ բաժին են հատկացնում և ընդհանուր ուժերով մշակում, իսկ ստացված արդյունքը տրամադրում ընկերությանը: Այդ միջոցը թե

հեշտ ե և թե լավ: Յեթե ամեն մի անդամ միքառող գեսյատին իր հողերից տրամադրի ընկերությանը, տեսար՝ 20—30 գետիատին դուրս յեկավ: Ընդհանուր ուժերով մշակելը այնքան ել գժվար բան չե:

Յերբ ընկերությունը կազմվեց և փողը հավաքեցին, պակասած փողի մասը կարելի յեստանալ բանկից, Բանկը բացի այդ տեսակ ընկերությունների աշխատանքներին ոփնելուց, դյուցիներին փող և բաց թողնում նաև հատուկ փորեկ գործի համար: Որինակ՝ ջրաղաց շինելու, սերմ գնելու, անտառն գնելու համար, Փոխառությունը կատարվում ե փողով, իսկ վերադարձնել կարելի յե և փողով և հացահատիկով, և բամբակով, և ուրիշ մթերքներով:

Վորեւ տեղից վերցրած փոխառության համար ընկերության բոլոր անդամներն ել պատախանառու յեն:

Պարզ ե, վոր ընկերության գործերը լավ տանելու համար հարկավոր ե փող ունենալ, բայց ամենապլիսավորը—աշխատող մարդիկ են պետք: Լավ աշխատող մարդկանց ընկերության գործերը միշտ ել լավ կպնան:

ԵԺԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ.

ՅԵթե գյուղատնտեսական ընկերության դորձերը լավ են գնում, նա կարող է իր անդամներին պետք յեղած ժամանակը ոգնել։ Պատահում ե, վոր գյուղացին կաթ ե բերել, ձու տըգել կամ հացահատիկ, իսկ հիմա փողի կարիք ունի, փող ստանալու ժամանակը դեռ չե հասել, իսկ գյուղացուն հենց հիմա այս կամ այն պատճառով փող ե պետք։ Այդ դեպքում ընկերությունը կարող է նրան փող տալ իր միջոցների համեմատ։

Ընկերությունը յուրաքանչյուր գյուղացու, ընկերության անդամի համար վարկի հաշիվ ե բաց անում։ Նայած, թե ի՞նչ գյուղացի յե և ի՞նչ միջոցների տեր, գրա համեմատ ել վարկը կարող ե մեծ կամ փոքր լինել։

Այդպիսով, այս դեպքում ել ընկերությունը ոգնում ե նրան նեղ որերին։

ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ.

ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ շատ մեծ նշանակություն եր տալիս կոռպերացիային։ Նա իր գրքերի մեջ և թերթերում գրում եր։

«Մեզ մոտ,—ասում ե Լենինը,—կոռպերա-

յիայի վրա բավականին ուշդարություն չեն դարձնում։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կոռպերացիան մեզ մոտ բոլորովին այլ նշանակություն պետք ե ստանա։

Քանի վոր պետական լշխանությունը բանվոր գասակարգի ձեռքն ե, մեր խնդիրն ե՝ ազգաբնակությունը յենթարկել կոռպերացիայի։

ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ իր հոդվածում ասում ե, վոր կոռպերացիայի գործը պետք ե գյուղացու համար հասարակ, թեթև և մատչելի լինի։ Ամեմենազլխավոր խնդիրը լենինը դրա մեջ ե գըտնում։ Կոռպերացիայի միջոցով ամեն մի փոքր տնտեսություն ունեցող գյուղացի կարող ե նոր պետության շինարարական աշխատանքներին մասնակցել։

ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ասելով կոռպերացիան պետական միջոցներից պետք ե ոգնություն ստանա։ Վորքան շատ գյուղացիներ մասնակցեն կոռպերատիվ շրջանառությունը, այնքան ավելի շատ կլինի պետական ոգնությունը։ Իսկ վորպեսզի բոլոր գյուղացիները մասնակցեն կոռպերացիային, անհրաժեշտ ե, վոր նրանք գրագետ լինեն։

«Առանց բոլորի գրագիտության,—գրում ե ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ, առանց համկացող լինելու, առանց ազգաբնակությունը սովորեցնելու, վոր նա ոգտվի գրքերից, և առանց ապահով լինելու, ա-

սենք, անբերրիությունից, սովից և այլն, — առանց դրան մենք չենք համար մեր նպատակին:

«Մեր խնդիրը կայանում է նրանում, վոր գյուղացիների համար կուլտուրական աշխատանք տանենք:

«Մենք կարող ենք, լավագույն դեպքում, անցնել այս եղոխան (ժամանակաշրջանը) մեր յերկու տամամյակում»:

Ան թե ի՞նչ և զրում լենինը կոռպերացիայի մասին:

Յեթե ամեն մի խելացի գյուղացի լավ հասկանա մեր մեծ ուսուցչի այս խոսքերը և աշխատի այնպես գործել, ինչպես ասած ե, նա մեծ ոգուտ կտա թե՛ իրեն և թե՛ ուրիշներին:



Ս.Խ.Հ.Մ.ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԵՆՏ. ՀԲԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԼԵՆԻՆՑԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- Լույս են տեսել՝
 1) Լենինի պատգամները յերիտասարդության,
 2) Լենին. — Ի՞նչպես պետք ե լինի կոմյերիտա.

ՍՈՅ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐՔ

- Լույս են տեսել՝
 1) Ստալին. — Գյուղացիական հարց,
 2) Ստալին. — Ազգային հարց.

ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- Լույս են տնօել՝
 1) Լիվինսկի. — Գյուղատնտեսական հարկ,
 2) Աստու կամքը թե՛ գյուղ, գիտությունը,
 3) Ռուդեն. — Գյուղաց, հողաշինարարության այրութենը,
 4) Մարգկային բնակարանի պատմությունը,
 5) Վլասով. — Հողն ինչպես մշակել յերաշտի ժամանակ,
 6) Դմիտրյավա. — Տգիտությունը և սնահալատությունը.

ԽՈՇՀՐԴԱՅԻՆ ԴՐԱՌՈՅԻ ԳՐԱԾԱՐՔ

- Լույս են տեսել՝
 1) Եսիպով. — Գյուղացիության պահանջները և խորհրդ, ոպրոցի ծրագիրը,
 2) Լենինի պատգամները բարեկարգության ասարիւմ,
 3) Ազգային հարցը և պարզությունը,
 4) Նեվերով. — Ինչպես ենին առ ըստմ տիկնիկ կան).



NL0208019

ԳԻՆԸ 30 Կ.

"W 1
W 2